ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՁՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզիԿաթնաջուր
համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.Կաթնաջուր, 13 փող. 1, Հեռ.
(099) 000302 , katnajur.lori@mta.gov.am

N 79
12 հուլիս 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ղեկավարի 2017թ.-ի հուլիսի 07-ի թիվ 17 որոշումը:

Առդիր՝ 1(մեկ) ֆայլ:

Invalid signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՊԱՊՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱԹՆԱՋՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Կաթնաջուր համայնք,
գ. Կաթնաջուր 13 փողոց 1 շենք
E-mail-Katnajur.lori@mta.gov.am
հեռ. +374 99-00-03-02

ՈՐՈՇՈՒՄ

<<07>> <<հուլիս>> 2017թվականի N 17

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 06-052-0067-0012 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՍԵՆ ԱՆԱՆԻԿԻ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով, հաշվի առնելով, որ Արսեն Անանիկի Վարդերեսյանի կողմից տիրապետվող Կաթնաջուր համայնքի թիվ 06-052-0067-0012 ծածկագրով բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը կազմում է 0,2025 հա, որը Արսեն Վարդերեսյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 2001 թվականին կառուցված

բնակելի տունը, ծածկարանը, պարիսպը և ավտոտնակը կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով <<Գուգարաց աշխարհ>> ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի հողամասի շինությունների հատակագիծը և Ա. Վարդերեսյանի դիմումը որոշում եմ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Արսեն Անանիկի Վարդերեսյանի (ծնված՝10.12.1974թ.) սեփականության իրավունքը Կաթնաջուր համայնքի թիվ 06-052-0067-0012 կադաստրային ծածկագրով 0,2025 հեկտար մակերեսով հողամասի, նրա վրա գտնվող 74,59 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 12,0 քառակուսի մետր մակերեսով ծածկարանի, 5,54 քառակուսի մետր մակերեսով պարիսպի և 100,32 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի նկատմամբ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել գ. Կաթնաջուր 1 փողոց, 5 փակուղի, թիվ 4 հասցեն:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հողաշինարար Ա. Նիկողոսյանի վրա:

Համայնքի ղեկավար՝ Ա. Պապոյան